ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԿՑԻ ՀԵՏ

Հարց.—Անթիլիասի կաթողիկոս Խորեն Առաջինը հուլիս ամսում նախագահել է Բոստոնում գումարված «Դաշնակցություն» կուսակցության տարեկան համագումարի բացման նիստին և արտասանել է մի ուշագրավ ճառ: Ձերդ Վեհափառությունը ծանո՞թ է արդյոք այդ ճառին և ի՞նչ կարծիք կարող է հայտնել նրա մասին:

Պատասխան.—Ձորս օր առաջ է, որ ծանոթացանք այդ ճառի բովանդակության, արտասահմանի հայ մամուլից: Կարդալով այն, Մենք տխրեցինք և մտահոգվեցինք: Պետք է ասել, թե հայ իրականության մեջ, երբեք չի պատահել, որ բարձրաստիճան մի եկեղեցական, պաշտոնապես և հրապարակով, կուսակցական մի համագումարում, այնքան շեշտված և ամբողջական կերպով, իր անձը և իր հոգևոր առաքելությունը նույնացրած լինի մի քաղաքական կուսակցության ծրագրի և գործունեության հետ:

Հոգևոր կոչումի գիտակցությունը ունեցող եկեղեցու որևէ սպասավոր և, առհասարակ, որևէ քաղաքական-հասարակական լուրջ գործիչ, չեն կարող հաշտվել՝ մի հոգևոր պատասխանատու ղեկավարի նման հայտարարությունների հետ:

Այլ բան է քաղաքական կյանքի բնույթն ու ասպարեզը և բոլորովին այլ բան՝ եկեղեցու առաքելության բնույթն ու էությունը և եկեղեցականի կոչումը:

Քաղաքականը անհրաժեշտորեն պարագայական է, փոփոխական ու հատվածական: Իսկ եկեղեցին հավիտենական հաստատություն է, իր էությամբ անփոփոխ, իր առաքելությամբ՝ մայր դաստիարակը ժողովրդի բոլոր զավակներին անխտիր, հավասարապես, վեր կուսակցական, հատվածական հակամարտություններից:

Այո, եկեղեցին, հոգևորականը պետք է ներկա լինեն հասարակական,

ազգային կյանքի մեջ, սակայն որպես միարար, հաշտարար և խաղաղարար գործոն՝ ազգի և հայրենիքի գերագույն շահերի գիտակցությամբ:

Մեզ մնում է ափսոսանք հայտնել այս անսպասելի ելույթի առթիվ և եղբայրորեն հորդորել Անթիլիասի գահակալ Տ. Խորեն կաթողիկոսին, որպեսզի պատշաճ մի ձևով, հետս կոչե հիշյալ իր հայտարարությունները, այլապես անօրինակ մի նոր կացություն կստեղծվի իր և իր Աթոռի համար հայ եկեղեցու և ժողովրդի ծոցում:

Հարց.—Մի հարց ևս, Վեհափառ:

Անթիլիասի Աթոռի միաբանները մասնակցելո՞ւ են եպիսկոպոսական ժողովին, որ գումարվելու է ս. Էջմիածնում:

Պատասխան.—Ինչպես հայտնի է, Մենք վաղուց ենք հրավերներ ուղղել Տանն Կիլիկիո կաթողիկոսին և եպիսկոպոսներին, սակայն տակավին վերջնական պատասխան չենք ստացած նրանց մասնակցության մասին:

10 սեպտեմբեր 1969 թ.